

**Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

*Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային  
հանձնաժողովի  
Նիստի*

Մասնակցում էին նիստի անդամները, շահառու հաշմանդամներ ունեցող հասարակական կազմակերպությունները, Հույսի Մեծամոր ՀԿ նախագահ Մ.Սեդրակյանը, Արմավիրի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն Լ.Ասատրյանը, մարզի երեք զբաղվածության տարածքային կենտրոնների տնօրենները, Վաղարշապատի արհեստագործական ուսումնարանի տնօրեն Կ.Դավթյանը և Փրկենք Երեխաներին ծրագրի ղեկավար Գոհար Գալստյանն ու «Ունիտն» հասարակական կազմակերպության ներկայացուցիչ Մարիաննա Չալիկյանը:

**Օրակարգում՝**

1. 2014թվականի ընթացքում Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային հանձնաժողովի կատարած աշխատանքների և 2015 թվականի աշխատանքային ծրագրի քննարկում.

*/Զեկուցող հանձնաժողովի նախագահ՝ Լ.Մուրադյան/*

2. Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով /LIFE/ ծրագրի ներկայացում.

*/Զեկ.՝ Գ.Գալստյան/*

Բացելով նիստը հանձնաժողովի նախագահ տիկին Մուրադյանը շնորհավորեց ներկա գտնվող կանանց տոնի միամսյակի առթիվ, ցանկացավ քաջ առողջության և բեղմնավոր աշխատանք: Նա ներկայացրեց 2014 թվականի ընթացքում հանձնաժողովի կատարած աշխատանքների մասին, նշելով, որ բավականին գործեր են արվել, սակայն անելիքները դեռ շատ են: 2015 թվականին էլ պլանավորված են շատ աշխատանքներ, որոնց իրականացումը ևս կընթանա հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության արդունքում: Ծրագրի մանրակրկիտ քննարկումից հետո տիկին Մուրադյանն ասաց, որ նիստին հրավիրված են նաև «Հաշմանդամություն ունեցող անձանց կենսամակարդակի բարելավում զբաղվածության խթանման միջոցով /LIFE/» ծրագրի ներկայացուցիչները և առաջարկեց լսել նրանց:

Գ.Գալստյանն ու Մ.Չալիկյանը հերթով ներկայացրին ծրագրի կողմից մշակված արդյունավետ մոդելի՝ հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի և միջին մասնագիտական կրթության հնարավորությունների ապահովման կամար հնարավոր եղանակների, այդ ուղղությամբ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ 2012-2014թթ. իրականացված ծրագրերի գրանցած հաջողությունների մասին,

պարբերաբար փոքրիկ տեսահաղովակներ դիտելու միջոցով: Այն մինչ այժմ իրականացվել է Երևան քաղաքում և չորս մարզերում:  
Միաժամանակ ասացին, որ ծրագրի 2-րդ փուլը այս տարի կիրականցվի նաև Արմավիրի մարզում: Բոլոր հարցերին տրվեցին սպառիչ պատասխաններ:  
Նիստի ավարտին տիկին Մուրադյանը բոլորի անունից շնորհակալություն հայտնեց նրանց գեղեցիկ մատուցման և արված օգտակար գործի համար:  
Նա հավաստիացրեց, որ ծրագիրը արդյունավետ է ու մեր մարզում էլ ամեն ինչ կանենք լիաժեռ իրագործելու:

**Հանձնաժողովի նախագահ՝**

**L.Մուրադյան**

Արձանագրող՝ Ծ.Գրիգորյան